

են վերջանում, որովք պտուտականման են ոլորւում։ Մի քանի բայսերի ժիլերը՝ և թէ ուշի ուշով նայենք, կընկատենք, որ նոքա ճիւղաւորուած են և նոցա ճիւղերը ել զոյդ զոյդ ոյնպէս են նստած, ինչպէս և միեւ նոյն բոյսերի բարդ տերեների տերենիկները։ Այդ ճիւղերը իսկ և իսկ բարդ տերեի չպարգացած վերին տերենիկներն են ներկայացնում։ Բոյսերի ժիլերը մօտակայ առարկաների շուրջը փաթաթուելու համար են ծառայում, որովհետեւ բոյսերի ցողուները կարող են այնքան թուլ լինել, որ իւրեանք իւրեանց պահպանել չեն կարողանում։

Տերեների բոլոր փոփոխութիւններից ամենաչետաքրքիրն է նոցա միջամաներ որսալու համար ունեցած յարմաքութիւնն այդ տեսակ տերեներով բոյսերից ամենանշանաւորն Պիոնէ և Ճան Ճորսն է (լուսա — մոխուսկա)։ Այդ բոյսի իւրաքանչիւր տերել ծայրի վերայ աւելորդութիւն ունի, որը թակարդ արդ է (լուսակա)։ Նման բացւում և փակւում է։ Արեգական լոյսի ժամանակ այդ աւելորդութիւնը սովորաբար բաց է լինում, բայց հենց որ ճանձը նստում է նորա վերայ և կպչումէ նորա մակերեսոյթի ստեներից մինին, իսկոյն թակարդը փակւում է և ճանձին իւր մէջ թաղում, որը թակարդի մէջ ծեծուելով սատակումէ։ Փոքր ինչ ժամանակից յետոյ թակարդը կրկին բացւում է և նոր որսի համար պատրաստ է լինում։

Գ. Տ. Գ.

( Յուրա-Նահակէլն ) .

— 1090 —

### ՀԱՅ ԶՔԱՒՈՐԱՑ ԽՆԵՄԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ.

Ալիքայիր համակրութեամբ կարգացինք «Ա. Յ. Ա. Յ. Ա. Տ. Ա. Գ. Կ. Բ.» շաբաթաթերթի մէջ տպուած «ՔՐԻՍՏՈՆ ՅԱՄԵԱՆ Ի ՄԵՌԵԼՈՅ» վերնագրով լի քրիստոնէկան զգացմամբը յօդուածը, որոյ մէջ Մեծ Հեղինակը ցանկանումէ, որ ինչպէս Տփիսու, նոյնպէս և ամեն քաղաքաբնակ հայ հասարակութիւնք ունենան ըստանելու, իւրաքանչիւր էլեւ իւրաքանչիւր էլեւ իւրաքանչիւր ներառյալ իւրաքանչիւր իւրեանց հայ չքաւոր եղբարց ինամբ տանելու և ճշմարիտ ազքատութեան երեսից կրած նոցա կեանքի դառնութիւնները զէթ մասամբ մեղմացնելու համար։

Արդարեւ, թէ ազգային և թէ կրօնական տեսակետից նայելով՝ այս ցանկալի միտքն իրագործել՝ մեզ հայերիս համար մի այնպիսի պարտք ու կարիք է, որովք մեզ ընակակից ու շրջապատող օտար ազգաց մէջ թէ յարգած կիմնիմք մեր ազգութեան անունը և թէ փառաւորած կիմնիմք մեր երկնաւոր Հայրը։ «Տեսացն ու քարծա ներ բարիս և քարտացն ու քարտացն ներ բարիս և պատուիրումէ Փրկիչը»։

Այսու ամենօրեայ գառն փորձերն ազացուցանումեն, որ շատ անգամ մարդուն գէպի յուսահատութիւն և մինչեւ անգամ գէպի մահ առաջնորդն ու զանազան հոգեկորոյս չարագործութիւնների ու մեղքերի

մէջ ձգողը չքաւորութիւնն է լինում. չքաւորութիւնն է այս, որ շատ անգամ ոչ միայն մի անհատի, այլև ամբողջ գերդաստանի բարդական անկումն է պատճառում, ուրեմն ամոքել մեր չքաւոր հայ եղբարց դառն վիճակը՝ նշանակումէ նորանից յառաջանալիք յուսահատութեանց, չարեաց, մեղաց ու բարզական անկմանց առաջն առնուլ:

Ցանկալի է և մեզ, որ Տփիխուու Հայերն ինչպէս իւրեանց թուի առաւելութեամբ և նիւթական ապահովութեամբ առաջին տեղ են բռնում հայ հասարակութեանց մէջ, նոյնպէս և այս բարեգործական ասպարիզում առաջին օրինակ տուողն հանդիսանային, որոց ինչպէս փորձը ցոյց է տալիս, անշուշտ կհետեւին և միւս քաղաքաց հայ հասարակութիւնքը:

Տորորդ դարու կիսէն ի վեր մինչեւ մօտ ժամանակներս շարունակուած ընդհանուր հայկական սովորութիւն էր՝ որ ամեն տեղ Հայոց եկեղեցեաց մօտ աղքատանոցներ, ինչպէս նաև յանուն աղքատաց՝ եկեղեցիներում գանձանակներ կային, և որքա՞ն տեղացի խեղճ՝ ի թիւս նոցա և պանդուխտ թշուառ հայերի օգնութիւն և մսիթարութիւն կշնորհէին. սակայն շատ տեղերում ի շնորհս հործեցեաւ լուսաւութեան տակաւ առ տակաւ կջնջուին այսպիսի գեղեցիկ ձեռնարկութիւնք, և առ այժմ հազիւ մի քանի տեղեր՝ ինչպէս Ա. Պօլսում, Մոսկվայում, Զմիւռնայում, Պրուսայում, և լ. և լ. կշարունակուին:

Ի դեպ է այստեղ գովութեամբ յիշել, որ Բագուայ և Շամախւոյ հայ հասարակութիւնք դեռ 1874—75 թուականներէն ունէին «Աղութ» և «Աղութակը» անուամբ ընկերութիւններ, ունէին վկայեալ մարդասէր և աստուածավախ նուղութներ, որոնց պարտքն էր՝ իւրեանց թաղերի մէջ թէ ուրախութեան և թէ սգոյ առիթով թաղականների արած ծախքերից մասն հանել յօգուտ իւրեանց աղքատաց գանձարանի. ունէին նոյնպէս իւրեանց գանձապահն ու կիւրակէ և տօն օրերում եկեղեցւոյ մէջ հանգանակութեան գանձանակը. Այս ընկերութեանց նպատակն էր, ոչ միայն նշանաւոր օրերում օգնել իւրեանց՝ թաղապետներից վկայեալ չքաւոր հայ եղբարց, այլև այն տեղերում պատահող պանդուխտ հայերին կամ պարապմունքի և աշխատանաց տեղ դտնել և կամ նոցա ձանապարհածախիքն հոգալով՝ հայրենիք վերադարձնել. Սոցա այս քրիստոնէավայել բարեգործութեանը ես ինքնս եղած եմ ականատես. և շատ անգամ է պատկերանում ինձ այն սրտաշարժ տեսարանը թէ նոցանից օժանդակուած բազմորդի այրին ու հացակարօտ աղքատը ի՞նչպէս էին ձեռք ու աչքերն դեպի երկինք վերուցած՝ մսիթարութեան և գոհութեան արտասուք թափելով՝ օրհնում իւրեանց այդ բարեգործ եղբայրներին.

Քաջայոյս եմք, որ Բագուայ և Շամախւոյ յարգոյ հայ հասարակութիւնքը տակաւին պահած կլինին և միշտ կպահպանեն այն ձշմարիտ բարեպաշտական սովորութիւնները և կհածեն այդ ընկերութեանց ներ-

կայ գրութեանց և գործունէութեանց մասին մանրամասն տեղեկութիւնք հաղորդել խմբագրութեանս ի հրատարակութիւն։

Ա. Վ.

### Ա. Զ. Գ. Ա. Ց. Ի. Տ. Տ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ.

Ազգիս Վ. Ե. Հայրապետը ի տօնի Ա. Զ. ատկի ըստ վաղեմի սովորութեան ընդունեց իւր ներկայութեան Մայր Աթոռոյս Միաբանութիւնը և նորան Հայրապետական օրհնութեամբ օրհնեց որից յետոյ ներկայացան Գ. Ճեմարանի, Ժառանգաւորաց ուսումնարանի և Վաղարշապատուերկուն գպրոցաց աշակերտներն ու նոցա ուսուցիչները ։ Նորին Սրբութիւնը բարեհաճեց լսել նոցա Ճառերը և խրախուսել նորանց ուսման մէջ և սպա ընդունեց իւր ներկայութեան Սինոդի և տեղական Կառավարութեան գործավարներին և պաշտօնեաներին և Վաղարշապատու հասարակութեան ներկայացուցիչներին։

\* \* \*

Նորին Սրբութիւն Ազգիս Վ. Ե. Հայրապետը բարեհաճեց Տպարանական Ժողովոյ անդամ Բարեշն. Պ. և ոնդ վարդապետին և Շնորհունակ Խփրեմ սարկաւագին վերահաստատել իւրեանց նախկին պաշտօնի մէջ և ներկայ 1882 թուականին, ի նկատի առնելով նոցա ջերմեռանդն և արդիւնաւոր գործունէութիւնը։

\* \* \*

Խմբագրութիւնս ստացաւ Տիկիսուու Հայոց ներսիսեան Ազգային Հռեաոր Թպրանոցի Մեծ. Հոգարարձութիւնից նոյն Թպրանոցի 1881 թուականի մտից և ծախուց համառօտ հաշուեցուցակը որը ամենայն ուրախութեամբ կտպենք յառաջակայ Մայիսի ամսատերի մէջ՝ ներկայ ամսատերում պարապ տեղի չունենալոյ պատճառաւ։

\* \* \*

Արբարի ընթերցոցաց ուշադրութիւնը հրաւիրելով սորա ներկայ ամսատերի մէջ տպուած՝ Յ. Վ. Ա. Մ. ստորագրութեամբ Ալէքսանդրապոլու յաջորդութեան վիճակագրական տեղեկութեանց վիրայ, ինդրումնենք ձեռնհաս անձինքներից բարեհաճել և իւրեանց վիճակաց և յաջորդութեանց նոյնօրինակ վիճակագրական տեղեկութիւնները առանձին հասուցանել խմբագրութեանս՝ Արարատի էջերում հրատարակելու համար ի տեղեկութիւն Ազգայնոցս։

— ՀՀ ՀՀ —